**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

25-ը ապրիլի 2018թ.
ժամը 10⁰⁰

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՉԲՖԿ ծառայության պետ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի ՊԺԿ-ի 20.03.2018թ. N 154/ԴՎԱ հրամանով հանձնաժողովի կազմում տեղի է ունեցել փոփոխություն և ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյանի փոխարեն որպես հանձնաժողովի գնահատող անդամ է սահմանվել ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՉԲՖԿ ծառայության պետ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյանը, որը ներգրավվել է հանձնաժողովի աշխատանքներին:

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

**27.04.2018թ., ժամը 15:30-ին** կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

---

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Շինարարական աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով մրցույթին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | «Բիդեք» ՍՊԸ |
| 2 | «Ջերմգազշին» ՍՊԸ |
| 3 | «Մեկուսիչ» Ա/Կ (համատեղ գործունեությամբ «Ներսես և ընկերներ» ՍՊԸ-ի հետ) |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքի.

- «Մեկուսիչ» Ա/Կ-ի (համատեղ գործունեությամբ «Ներսես և ընկերներ» ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի 8.19-րդ կետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ գնային առաջարկը հաստատված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ (ըստ ներկայացված տվյալների թե «Մեկուսիչ» Ա/Կ-ն և թե «Ներսես և ընկերներ» ՍՊԸ-ն հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ):

***Հիմք ընդունելով այդ հանգամանքը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Մեկուսիչ» Ա/Կ-ի (համատեղ գործունեությամբ «Ներսես և ընկերներ» ՍՊԸ-ի հետ) հայտը, իսկ ներկայացված մնացած փաստաթղթերը թողնել առանց քննության:***

2.3 Քննարկելով «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումն (կցվում է) առ այն, որ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի 5.1 կետի պահանջներին և հայտը ենթակա է մերժման, գնահատող հանձնաժողովը որոշեց, որ ներկայացված փաստաթղթերը բավարար չեն մասնակցի պահանջը ապացուցելու համար, ուստի «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը գնահատվեց հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Ռ. Մարդոյան)

3.1 «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով մրցույթի շրջանակներում գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

ՀՀ դրամ

| Չ/հ | Աշխատանքի անվանումը | Նախահաշվային գին/ ՀՀ դրամ/ | «Բիդեք» ՍՊԸ | | «Ջերմգազշին» ՍՊԸ | | «Մեկուսիչ» Ա/Կ (համատեղ գործունեությամբ «Ներսես և ընկերներ» ՍՊԸ-ի հետ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Ջեռուցման կայանների վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքներ | **648,937,901** | 117,208,333 | 140,650,000 | 443,440,890 | 532,129,068 | 400,200,000 | 480,240,000 |

*Ներկայացված են ծավալաթերթով նախատեսված աշխատանքների (առանձին տողերի) համար մասնակիցների կողմից առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում ստացվող թվերը:*

3.2 «Բիդեք» և «Ջերմգազշին» ՍՊԸ-ների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Ընդունել ի գիտություն, որ «Մեկուսիչ» Ա/Կ-ի (համատեղ գործունեությամբ «Ներսես և ընկերներ» ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի 8.19-րդ կետին և մասնակցի հայտը մերժվել է:

3.3 Սույն մրցույթի շրջանակներում գների նվազեցման բանակցություններ չեն վարվել:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել հանձնաժողովի անդամների կողմից էլեկտրոնային գնահատումն իրականացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

*(Ռ. Մարդոյան)*

**03.05.2018թ ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները**

4.1 էլեկտրոնային գնահատման արդյունքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Բիդեք» ՍՊԸ-ն: «Ջերմգազշին» ՍՊԸ-ն ճանաչվեց 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Ռ. Մարդոյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով մրցույթի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվելիք հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՋ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ս. Աբովյան |
| Գնահատող | Ա. Պապյան |
| Գնահատող | Հ. Բաղալյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| Գնումները համակարգող՝ | Ռ. Մարդոյան |

**03.05.2018թ**